

առանց միջազնող բիծերու: Բանաստեղծին «սպասումը», այսինքն՝ հիւրընկալ, բացարձակ եւ վեհանձն իր դերքաւորումը այլեւս չի՝ վերաբերել այս կամ այն բանին միայն, այլ՝ ամբողջութեան մը, բացարձակի մը. եւ այս ճամբու վերջաւորութեան պիտի հասնինք արդէն «Ըլլա՛յ» ներու դերքաւորումին:

Այս յատկանիշներէն շատեր, որոնք հիմնական պիտի դառնան «Ձմրան պարզ գիշեր»ին¹³⁷ նման քերթուածի մը համար (քերթուած՝ որով ԾԻԱԾԱՆԵ կը բացուի), մեծ մասով ստուերադրուած կը դառնանք արդէն «Աղերսանք»ին մէջ: Կրնանք դրեթէ հաստատել թէ «Աղերսանք»ը ուղղակի նախընթացն է «Ձմրան պարզ գիշեր»ին, եւ թէ «Ձմրան պարզ գիշեր»ը փոփոխական է «Աղերսանք»ին՝ աւելի զարգացած, խորացած եւ պարզուած: Այս վերջինին մէջ ունինք կաթեցուր հոգւոյս մէջ յայդ կեանքին (Ա. տող), «Ձմրան պարզ գիշեր»ին մէջ՝ Պուտ պուտ կաթեցուր հոգւոյս սիրաբեր (Տրդ տող). «Աղերսանք»ին մէջ կը կարգանք՝ ինծի տուր կաթը խանդաւանդանքին (Տրդ տող), «Ձմրան պարզ գիշեր»ին մէջ՝ Կաթը մեղմախոս լոյսիդ տարփանքին (Յրդ տող): Չենք ուզեր հոս երկու քերթուածներուն բաղդատական վերլուծումը ընել. կը դոհանանք նշելով զուգահեռ այս կէտերը, որպէսզի, ինչպէս ըսինք, տեսնուի թէ Մեծարենցի համար կարեւոր, վճռական շրջանի մը մէջն ենք, անկիւնադարձի մը առջեւ կը դրոնուինք: Կը յայտնուին դերքաւորումներ, որոնք յետոյ կենսական պիտի դառնան ԾԻԱԾԱՆԵ Մեծարենցին. օրինակի համար, կը յայտնուին բանալի-բառեր, ինչպէս՝ կաթեցուր եւ կաթ, որոնք հոգեքնական մեկնութիւնը կրնայ կարեւոր արդիւնքներու տանիլ մեզ, ճանչցնելու համար Մեծարենցի բանաստեղծական խառնուածքը¹³⁸: Կ'ուզենք նշել ի մասնաւորի թէ ինչպէս մէկ քերթուածէն միւսը անցընէ՝¹³⁹ կ'ենթադրէ ալօրինակ արժէքներու յայտնարեւում մը: Հարկ է աւելցնել նաեւ թէ այս տուեալներով կու գանք զատուիլ Բալուեանի տեսակէտէն, որով բանա-

ստեղծ-Մեծարենցի ծնունդը կը փոխադրուէր մինչեւ 1906էն ետք առեւ մը¹⁴⁰, զայն վերադրելով «անակնկալ» անկիւնադարձի մը, կոչելով զայն «գաղտնիք մը»: Կը թուի թէ այս դատումները եղած են ուսման թիւ քննադատութեան հիման վրայ: Գիտենք մանաւանդ թէ ԾԻԱԾԱՆԵ քերթուածներուն մեծ մասը գրուած էր նաեւ տպուած, 1904-1905ին: Այլ խօսքով, հրատարակելով ԾԻԱԾԱՆԵ, Մեծարենց ամփոփած է լաւագոյնը սկզբնական շրջանի իր գրական գործունէութեան. մինչ այդ թուականը դրած իր քերթուածներուն մէջ կատարելով որոշ ընտրութիւն մը, եւ ստեղծ յատկանշական փոփոխութիւններու ենթարկելով ընտրած կտորները: «Ձմրան պարզ գիշեր»ին հետ բաղդատուած «Աղերսանք»ի պարագան կը ներկայացնէ - հիմնուած երկու քերթուածներուն արտայայտութեան եւ նիւթի նմանութեան վրայ - Մեծարենցի զարգացման յառաջխաղացութեան եւ փրթութիւնին հանգոյցը՝ որ կը լուսաբանէ զըրական իր աշխատանքին ներքին կազմաւորումը: Որով, փոխանակ «գաղտնիք»ի մը վերադրելու բանաստեղծ-Մեծարենցին մէջ բանաստեղծը աճեցաւ՝ փնտռութիւն, ինքնաորոգւթեան, իր իսկ ներաշխարհին հետազոտութեան անխոնջ աշխատանքի մը շնորհիւ, կուտակումովը արդումներու եւ քննական վերամշակումովը զրական իր յատկութիւններուն:

137. ՀՊՀ էջ 21. ԳՅ 20, էջ 25:

138. Կը մտածենք մանաւանդ Edmund Bergler/ կարգ մը տեսակէտներուն (տես Basic Neurosis, Grune and Stratton, New York, 1939):

139. Կամ ալ ընտրութիւնը: Չենք գիտեր երկու քերթուածներուն ժամանակագրական կարգը: Կրնանք ենթադրել թէ «Աղերսանք»ը կանխած ըլլայ «Ձմրան պարզ գիշեր»ը: Վստահ գիտենք թէ Մեծարենց զուրս ձգեց առաջինը եւ երկրորդը առաւ ԾԻԱԾԱՆԵին մէջ: Ընտրութիւն մըն է որ կարեւորութիւն կը ներկայացնէ անցիկ տեսակէտով. այս իսկ պատճառով որ՝ զեղբայրնք այս վերջին բացատրութիւնը:

140. ՎԷՄ էջ 26:

Այս իսկ առումով կ'արժէ յիշել 1904ին տպուած քերթուած մը, «Ան իմ սիրտս է»¹⁴¹: Ազատ չափով գրուած՝ Մեծարենցի առաջին գործն է: Ներկայացուած հոգեվիճակը լքումի է ու քանդումի. Կը խորհիմք քէ սիրտս ալ է աշխան գիշեր մը լացով. ա'լ հարկը չենք տեսներ ընդգծելու խորհրդապաշտական «correspondance»ի տառապէս մուտք գործած է արդէն Մեծարենցի տան մէջ: Նշենք, ընդհանրապէս, թէ հոս տիրող նիւթը հոլին է այլեւս, եւ այս ուղղութեամբ քերթուածը կը

կանխէ նիւթ մը՝ որ յետոյ ԾԻԱԾԱՆԵն եւ ՆՈՐ ՏԱՂԵՐՈՆ համար պիտի դառնայ էական:

Նկատենք, վերջապէս, թէ Մեծարենցի քերթուածները համախմբողները՝ «Պետրոս Դուրեան»ով¹⁴² կը փակեն ԲԱՅԱ-ՆՈՒՄՆԵՐ շարքը. քերթուածը մեծարանք ինքնին շարքը. քերթուածը մեծարանք ինքնին շարքը. քերթուածը մեծարանք ինքնին շարքը. քերթուածը մեծարանք ինքնին շարքը:

(Շար. 2)

Յ. ԱՇՐԱՖԵԱՆ

141. ՀՊՀ էջ 202. ԳՅ 21, էջ 56:
142. ՀՊՀ էջ 203. ԳՅ 21, էջ 56:
143. Այսօր կրնանք ըսել. - «Խղում մըն է»:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՅ

ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՐՇԱՐՈՒՆԻՈՅ
ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ

ՀԱՅԿ. ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱՆՈՒՍՏ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Աշխատասիրութեամբ
Հ. ԳԵՐՈՎԵՐԻ Վ. ՉՐԱՔԵԱՆԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ (էջ 1-81) - Գրիգորիս Արշարունի - վախան Պատրիկ
Կամարական - Չեռագիր - Առաջադրաց - Քառասնորդաց Պահի
Բովանդակութիւն Մեկնութեան:

ԲՆԱԳԻՐ (էջ 83-215) - ՅԱՆԿ ՆԻԹՈՅ (էջ 217-220)

ՅԱՆԿ Ս. ԳՐԻԳՐԻ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՅՅ (էջ 221-223)